Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Հաղթանակի միջնակարգ դպրոց

Թեմա՝ Ուսումնառության համընդհանուր ձևավորում(ՈՒՀՁ)

Վերապատրաստող, մենթոր՝ Մայրանուշ Մկրտումյան

Ուսուցիչ՝ Անուշ Բեջանյան

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3

Համընդհանուր ձևավորում և սովորողների բազմազանություն 4

Նյութի ներկայացման ձևերի բազմազանություն 8

Գործելու և գիտելիքներն արտահայտելու ձևերի բազմազանություն 11

Ներգրավման ձևերի բազմազանություն 17

Եզրակացություն 22

Գրականության ցանկ 23

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Համաշխարհային կրթական համակարգում հայկական կրթական համակարգը իր յուրահատուկ տեղն ունի և երբեք անմասն չի մնացել ու չի կարող մնալ համընդհանուր կրթական զարգացումներից։

Մեր ժողովրդի համար հարյուրամյակներ շարունակ կրթությունն ու մշակույթը եղել են հարատևման կարևորագույն միջոցներ։ Հայը միշտ գիտակցել է, որ առանց մայրենիի ու հավատքի, առանց կրթության ու մշակույթի անհնար է գոյատևել որպես ազգ, և համազգային ճիգերով, ուր էլ որ եղել է, բացել է դպրոցներ, հիմնել եկեղեցիներ և կերտել իր մշակույթը։ Հայն անսահման ջերմությամբ ու ավյունով է նվիրվել կրթության համակարգի ստեղծման, նրա արդյունավետության բարձրացման և միջազգային առաջավոր չափանիշներին համապատասխան զարգացման ապահովմանը։

Ներկայումս աշխարհի համարյա բոլոր երկրներում ընթանում են կրթական համակարգի վերափոխումներ, որոնք ուղղված են կրթական համակարգի արդյունավետության բարձրացմանը։ Ժամանակակից աշխարհում կրթությունը պետք է ճկուն լինի, արձագանքի փոփոխություններին, լինի փոփոխություններն առաջ մղող ուժը։

Կրթական ոլորտում վերջին ժամանակներս լայն տարածում է ստացել դասավանդման մի մոտեցում, որն ընդունված է անվանել Ուսումնառության համընդհանուր ձևավորում՝ ՈՒՀՁ կամ UDL։ ՈՒՀՁ-ն հարմարեցնում է կրթության էությունն ու բովանդակությունը բոլոր սովորողների բազմազան կարիքներին՝ պահպանելով բարձր ակնկալիքներ բոլոր սովորողների համար ներառյալ հաշմանդամություն կամ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքներ ունեցողներին, խոցելի խմբերի ներկայացուցիչներին։

ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆ

Ի՞նչ է համընդհանուր ձևավորումը և ի՞նչ կապ ունի այն սովորողների բազմազանության հետ: «Համընդհանուր ձևավորում» եզրույթը սկսել է շրջանառվել 1960-ական թվականներից Ամերիկայի Միացյալ Նահանգներում: «Համընդհանուր ձևավորում» եզրույթն առաջին անգամ օգտագործել է Ռոն Մեյսը, որպեսզի նկարագրի բոլորի համար՝ այդ թվում նաև հաշմանդամություն ունեցող մարդկանց համար մատչելի շենք-շինություններ կառուցելու գաղափարը: Ըստ Մեյսի՝ «Համընդհանուր ձևավորումը արտադրանքի և միջավայրերի նախագծումն է բոլոր մարդկանց օգտագործման համար՝ հնարավորինս բացառելով հետագա հարմարեցման կամ փոփոխությունների անհրաժեշտությանը»: Մեյսը ուներ խնդիրներ և տեղաշարժվում էր անվասայլակով: Նա շարունակ խնդրում էր, որ շենքերում ֆիզիկական մատչելիությունն ապահովված լինի: Մեյսն առաջարկեց շենքերը նախագծելու ժամանակ հաշվի առնել մատչելիության հանգամանքը. բոլոր մարդկանց համար՝ անկախ այն բանից, թե նրանք ինչ ֆիզիկական կարողությունների տեր են, ինչ տարիքի են և այլն: Ժամանակը փաստեց, որ դա կբարելավի բոլորի կյանքը: Համընդհանուր ձևավորման օրինակներ են.

ա) ճամփեզրերի կտրվածքները, որոնք ստեղծվել են սայլակով տեղաշարժվողների համար, բայց խիստ անհրաժեշտ են անվասայլակներ օգտագործողներին, այն ծնողներին, որոնք զբոսնում են մանկասայլակով, հեծանվորդներին և ուրիշներին:

բ) աուդիոգրքերը, որոնք, ճիշտ է, ստեղծվել են այն մարդկանց համար, ովքեր տեսողության խանգարումներ ունեն, բայց կիրառվում են նաև նրանց կողմից, ովքեր գերադասում են տեղեկությունն ընկալել լսելով, ովքեր կարդալու ժամանակ չունեն:

«Համընդհանուր ձևավորում» եզրույթն ունի ճարտարապետական ակունքներ: Այն կամաց-կամաց տարածվել է կյանքի այլ բնագավառներում: Այն իր մեջ ներառում է բոլորի համար հավասար հնարավորություններ ապահովելու, բազմազանությունը

հաշվի առնելու, խտրականությունը լիովին բացառելու սկզբունքները։ Իսկ ի՞նչ կապ կա համընդհանուր ձևավորման և կրթական համակարգի միջև։

Պետք է ասենք, որ սովորողներից յուրաքանչյուրը տարբեր է, ունի իր մտավոր ու ֆիզիկական կարողություններ, ընկալման յուրահատկությունները, նախասիրությունները և այլն։ Բոլոր մարդիկ էլ, գաղտնիք չէ, այսպիսին են։ Եթե դասը մեկ մոտեցմամբ ենք պլանավորում՝ ասենք ցուցադրելով կամ պատմելով, մտքում ի նկատի ունենալով միջին կարողությունների տեր սովորողներին, ապա այդ դասը չի համապատասխանում սովորողներից ոչ մեկի առանձնահատկություններին և կարողություններին։

Թեդ Ռոզը, որը Հարվարդի համալսարանի կրթության բարձրագույն դպրոցի դասախոս է, իր հանրահայտ գրքում, որը կոչվում է «Միջինի միֆը» մի կարևոր միտք է արտահայտում և ապա ապացուցում իր այդ միտքը։ Այն այսպես է հնչում. «Երբ ուսուցիչը պլանավորում է իր դասերը «միջին աշակերտի» համար, նա իրականում պլանավորում է ՈՉ ՈՔԻ համար։ Այդ դասը արդյունավետ չէ լինում ո՛չ ուժեղ, ո՛չ էլ թույլ կարողություն ունեցող սովորողի համար»։

Այսպես է լինում, քանի որ դասավանդման որևէ ձև, որը մենք ընտրում ենք մտածելով, որ մեր սովորողներից մեկը այդ նյութը սովորում է դանդաղ, իսկ մյուսը՝ արագ, ուրեմն միջին տարբերակն էլ բոլոր սովորողների համար հասկանալի կլինի։

Յուրաքանչյուր ուսուցիչ պետք է դասը պլանավորելուց հետո իրեն հարց տա, թե իր պլանավորած դասերը որ աշակերտի կարողություններին ու սովորելու առանձնահատկություններին են համապատասխանում, թե որքանով են դրանք հասանելի ու ըմբռնելի յուրաքանչյուր աշակերտի համար։

Ուսումնառությունը պլանավորելիս ուսուցիչը պետք է ոչ թե ընտրի մեկ մեթոդ, մի միջին տարբերակ, որը, թվում է, թե հասանելի ու հասկանալի կլինի բոլորի համար, այլ պիտի ընտրի համընդհանուր տարբերակ։ Ուսուցիչը դասը պլանավորելիս միշտ պիտի նկատի ունենա բոլոր աշակերտներին, որպեսզի ուսումնառությունը մատչելի լինի յուրաքանչյուր աշակերտի համար։

Ուսումնառությունը լավ պլանավորելու համար շատ կարևոր է իմանալ, թե ինչպես է մարդը սովորում, այս կամ այն բանը սովորելիս ինչ է կատարվում ուղեղում: Այս ամենը իմանալով դասավանդողը գիտականորեն հիմնավորված սկզբունքներով այնպես կպլանավորի դասը, որ ուսումնառությունը արդյունավետ ընթանա հենց սկզբից՝ հիմք ընդունելով մարդու ուղեղի աշխատանքային սկզբունքները:

Ուսումնառության գործընթացում սովորողի ուղեղում երեք հիմնարար հարցեր են առաջանում.

Առաջինը՝ ի՞նչ եմ ես սովորում: Սա դասի բովանդակությունն է և այն մատչելի դարձնելու նախընտրած ձևը:

Երկրորդը՝ ինչպե՞ս եմ ես սովորում: Ինչպես սովորելը սովորողների ֆիզիկական և մտավոր գործողություններն են ուսումնառության ընթացքում, այն ամենը ինչ սովորողն անում է սովորել կարողանալու համար:

Երրորդը՝ ինչու՞ եմ սովորում: Սա սովորողների հետաքրքրությունն է և մոտիվացիան, տվյալ նյութը սովորելու իմաստը ընկալելը:

Այս երեք հարցերը՝ ի՞նչ-ը, ինչպե՞ս-ը և ինչու՞-ն գալիս են մարդու ուղեղի գործնական երեք ցանցերից՝ ճանաչողական ցանց, ռազմավարական ցանց, հուզական ցանց:

Ուսումնառության համընդհանուր ձևավորումը տալիս է ուսումնառության ներկայացված երեք հարցերի պատասխանները: Այդ հարցերն են՝ ի՞նչ, ինչու՞ և ինչպե՞ս: Ուսումնառության համընդհանուր ձևավորումը իրենից ներկայացնում է գիտականորեն ճիշտ և արժանահավատ սկզբուքների մի ամբողջական և կուռ համակարգ: Այդ սկզբունքների տեղին կիրառումը ուսուցչին օգնում է պլանավորման փուլից ճանաչել սովորողների ուսումնառության հնարավոր բարդություններնն ու խոչընդոտները և ձևավորել այս կամ այն այլընտրանքը որպեսզի կարողանան հաղթահարել այդ խոչընդոտները:

ՈՒՀՁ-ն կրթական մի շրջանակ է, մի մոտեցում, որի շնորհիվ ուսումնառության բոլոր փուլերում կրթական միջավայրը, ուսումնական ծրագրերը, դասավանդման մոտեցումը,

ուսումնառության գնահատման գործընթացը հարմարեցվում են սովորողների բազմազան կարիքներին ու առանձնահատկություններին։ Այդ ամենը արվում է, որպեսզի բոլոր սովորողների համար ուսումնառությունը լինի մատչելի և հասանելի։

Ուսումնառության համընդհանուր ձևավորումը իրենից ներկայացնում է երեք կարևորագույն գործընթացներ։ Առաջին գործընթացն է՝ սահմանել կրթական նպատակներ այնպես, ինչպես ամեն մի ուսուցիչ յուրաքանչյուր դասից առաջ սահմանում է իր դասի նպատակը։ Երկրորդ գործընթացն է՝ նախօրոք, դեռ պլանավորման փուլից բացահայտել, կանխատեսել և կանխարգելել ուսումնառության հնարավոր խոչընդոտներն ու բարդությունները։ Երրորդ գործընթացն է՝ նախօրոք ձևավորել այլընտրանքներ, գտնել միջոցներ և հնարներ, որպեսզի այդ բոլոր խոչընդոտները հնարավորինս չեզոքացվեն։

Սովորողների ուղեղի երեք գործառնական ցանցերի աշխատանքը արդյունավետ ապահովելու համար ուսումնառության համընդհանուր ձևավորումը մեր՝ դասավանդողներիս, առաջարկում է երեք կարևորագույն ուղենիշներ.

ա) ուսումնառության «ի՞նչ» հարցին պատասխանելու համար տրամադրել նյութը բազմազան, այլևայլ եղանակներով

բ) ուսումնառության «ինչպե՞ս» հարցին պատասխանելու համար ուսումնառության համընդհանուր ձևավորումն առաջարկում է տրամադրել սովորողներին գործելու և արտահայտվելու բազմազան ձևեր

գ) ուսումնառության «ինչու՞» հարցին պատասխանելու համար պետք է խթանել աշակերտների հետաքրքրությունը բազմազան եղանակներով, որպեսզի սովորողները ներգրավվեն, ձգտեն ավելի ու ավելի շատ սովորելու։

ՆՅՈՒԹԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՁԵՎԵՐԻ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆ

Կան երեք կարևոր գործոններ, որոնք ուսուցման գործընթացի վրա մեծ ազդեցություն ունեն: Այդ գործոններն են սովորելու տարբեր ոճերը, նյութը յուրացնելու, ըմբռնելու զանազան մոտեցումները և սովորողի մտավոր կարողությունները: Բազմազանության այս դրսևորումներին կարող ենք ավելացնել, օրինակ, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունենալը, տեսողական, լսողական, խոսքային և այլ խնդիրներ:

Այս պատճառներով է պայմանավորվում ուսումնական նյութը բազմազան եղանակներով ներկայացնելու սկզբունքը: Դա արվում է, որ մեր ներկայացրած նյութը բոլոր սովորողների համար ընկալելի և մատչելի լինի:

ՈՒՀՁ-ի՝ նյութի ներկայացման ձևերի բազմազանության ուղենիշը ենթադրում է երեք սկզբունքներ.

ա) ապահովել տարբերակներ տեղեկատվության ընկալման համար

բ) ապահովել տարբերակներ լեզվական կառույցների, եզրույթների և սիմվոլների համար

գ) ապահովել տարբերակներ տեղեկատվության հասկացման վերլուծության համար:

Բոլորիս հետ էլ պատահել է, երբ աշակերտը դասի ընթացքում շատ պասիվ է, ձանձրանում է, չի լսում, և ստիպված ենք լինում մի քանի անգամ նույն նյութը բացատրել: Դրա պատճառն այն է, որ նյութի ցուցադրման մատուցման ընտրված եղանակը չի համապատասխանում սովորողի ընկալման առանձնահատկություններին:

Այստեղ տեղին է հիշել գերմանացի մանկավարժ, գրող և փիլիսոփա, հասարակական գործիչ Ադոլֆ Դիստերվեգի խոսքերը.«Կրթությունը գիտելիքների քանակը չէ, այլ լիակատար ըմբռնումն ու հմուտ կիրառումն այն ամենի, ինչ գիտես»:

Նյութը յուրաքանչյուր սովորողի համար ընկալելի և հասանելի լինելու համար ուսուցիչը պետք է նյութը ցուցադրի, մատուցի բազմազան եղանակներով՝

ներկայացնելով այն սահիկաշարերի, գծապատկերների, աղյուսակների միջոցով՝ կիրառելով բոլոր ռազմավարությունները միասին։ Դա նշանակում է, որ նյութը պետք է փոխանցել տեսողական, ձայնային, նկարներով և տեքստով։ Նյութը բազմազան եղանակներով ներկայացնելը հնարավորություն է տալիս աշակերտին ընտրելու, թե որ ձևն է իրեն հարմար, թե ինքն ինչպես է ավելի հեշտ սովորում ու մտապահում։ Նյութը բազմազան եղանակներով ներկայացնելը հնարավորություն է տալիս նաև սովորողներին միաժամանակ մի քանի զգայարանով ընկալել ուսումնական նյութը, ինչն էլ ավելի արդյունավետ է դարձնում ուսումնառության գործընթացը։ Կախված աշակերտների առանձնահատկություններից և կարիքներից՝ խրախուսվում է, նախընտրելի է սովորողներին տրամադրել նյութի ձայնային տարբերակը։

Նյութը սովորողին բազմազան եղանակներով ներկայացնելու երկրորդ սկզբունքն է՝ ապահովել տարբերակներ, որպեսզի լեզվական կառույցները, եզրույթները և սիմվոլները ընկալելի լինեն։ Գիտենք, որ դասագրքերի ակադեմիական բառապաշարը հարուստ է այլևայլ հասկացություններով, սիմվոլներով, տերմիններով, փոխառված հասկացություններով։ Բացի դա մեր լեզուն հարուստ է բառապաշարով, տարբեր լեզվական կառույցներով, որոնք կարող են դժվարընկալելի լինել սովորողների այս կամ այն խմբի համար։ ՈՒՀՁ-ն առաջարկում է բարդ բառերի, հասկացությունների ու սիմվոլների պարզեցում համապատասխան թեմատիկ նկարներով կամ պատկերներով, որոնք կարող են ապահովել այդ հասկացության ապահովումը սովորողի կողմից։ Օգտակար է նաև, երբ ուսուցիչն օգտագործում է գրաֆիկներ, բացատրություններ, թարգմանություններ։Բառապաշարն ու սիմվոլները, ուսուցանվող նյութը ավելի մատչելի դարձնելու համար ՈՒՀՁ-ն առաջարկում է նախապես ուսուցանել հասկացությունները՝ դրանք կապելով սովորողի ունեցած գիտելիքների հետ։ Ոչ միայն բառապաշարը պետք է պարզեցնել, այլև պետք է պարզեցնել նաև բարդ, երկարաշունչ նախադասությունները։ Դրա համար բարդ քերականական միավորները կարելի է փոխարինել պարզ համարժեքներով, կարելի է կազմել նաև դժվարընկալելի, բարդ նախադասության գծապատկերը, կարելի է նաև նյութը բաժանել մասերի, ընդգծել կարևոր բառերը, հասկացությունները։

Նյութը սովորողին բազմազան եղանակներով ներկայացնելու երրորդ սկզբունքն է ապահովել նոր նյութի ըմբռնման ձևերի բազմազանություն: Բոլորիս համար էլ պարզ է, որ բոլոր թեմաները մեկը մյուսի հետ տրամաբանորեն կապված են: Յուրաքանչյուր դասի սկզբում միշտ անդրադառնում ենք նախորդ թեմային, որպեսզի ընդգծենք տրամաբանական շարունակությունը: Այս առումով շատ օգտակար է օգտագործել մուտքի և ելքի քարտեր, կիրառել ԳՈՒՍ մեթոդը:

ՈՒՀՁ-ն նյութի ըմբռնման ձևերի ապահովման համար առաջարկում է ընդգծել նյութի էական գաղափարները և այն կապերը, որ կան դրանց միջև: Որպեսզի աշակերտները առավելագույնս ներգրավված լինեն նոր նյութի ներկայացմանը և կենտրոնացած լինեն, պետք է սովորողներին հանձնարարել կազմել աղյուսակներ, որոնցում աշակերտները կնշեն սահմանումները, կարևոր գաղափարները և նյութի ըմբռնումն ավելի դյուրին կլինի: Նյութի ներկայացման համար անհրաժեշտ է նաև ապահովել տարբերակումներ գունային, տարբեր տառաչափեր, ընդգծումներ, որպեսզի Կարողանանք կենտրոնացնել սովորողի ուշադրությունը էական կետերի վրա: Նյութի շատ լավ ըմբռնում է ապահովում պատմության քարտեզագրումը, որի միջոցով սովորողները նոր նյութը շատ խորն են ըմբռնում, վերլուծում և, իհարկե, հիշում: Ըստ ուսումնառության համընդհանուր ձևավորման, որպեսզի սովորողները նյութը խորապես ընկալեն, շատ էական է, որ նրանք հնարավորություն ունենան այդ գիտելիքը կիրառել առօրյայում, կյանքի տարբեր ոլորտներում: Սովորողներին պետք է մշտապես ցույց տանք այնպիսի օրինակներ, որոնք կապ կունենան իրական կյանքի հետ:

ԳՈՐԾԵԼՈՒ ԵՎ ԳԻՏԵԼԻՔՆԵՐՆ ԱՐՏԱՀԱՅՏԵԼՈՒ ՁԵՎԵՐԻ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆ

Մարդու ուղեղի գործառնական երկրորդ ցանցը ռազմավարական ցանցն է, որը պատասխանում է ուսումնառության «ինչպե՞ս» հարցին: Այն ապահովում է սովորողի գործողությունները, պլանավորումը և սովորածն արտահայտելն ու կարողանալը:

Ուսումնառության համընդհանուր ձևավորման այս ուղենիշը, որը կոչում ենք գործելու և գիտելիքներն արտահայտելու ձևերի բազմազանություն, ունի երեք սկզբունքներ: Այդ սկզբունքներն են.

ա) ապահովել տարբերակներ ֆիզիկական գործունեություն պահանջող առաջադրանքները կատարելու համար

բ) ապահովել տարբերակներ արտահայտվելու համար

գ) ապահովել տարբերակներ մտավոր գործառույթների աշխատանքը արդյունավետ իրագործելու համար:

Ուսումնառությունը սովորողից ֆիզիկական գործունեության և արտահայտվելու ինչպիսի՞ կարողություններ է պահանջում, ինչպիսի՞ խոչընդոտներ կարող են ունենալ այն սովորողները, որոնք ունեն ֆիզիկական գործունեության որոշ սահմանափակումներ կամ արտահայտվելու դժվարություններ:

Դիտարկենք, թե ինչ առաջադրանքների միջոցով են մեր սովորողները մեծամասամբ արտահայտում իրենց գիտելիքները, ի՞նչ առաջադրանքներով ենք դասավանդողներս ստուգում գիտելիքների յուրացումը, հմտությունների ձևավորումը մեր աշակերտների մոտ: Աշակերտներին բոլորս էլ հրահանգում ենք. «Պատմի՛ր», «Մոտեցի՛ր գրատախտակին», «Վերլուծի՛ր նախադասությունը» և այլն: Այստեղ հարց է ծագում, թե արդյո՞ք ուսուցման արդյունքների կամ գնահատման ընդունված և ուսուցիչներիս կողմից հաճախ կիրառվող մոտեցումները և ձևերը ապահովում են հավասար

հնարավորություններ բոլոր սովորողների համար, արդյո՞ք դրանք չեն պարունակում սահմանափակումներ սովորողների համար։

Ուսումնական նյութերի մեծ մասը, հենց սովորելու գործընթացը պահանջում է սովորողների ֆիզիկական գործունեություն։ Սովորողները գրում են, թերթում են գրքեր,լրացնում են պահանջվողը,մեկ այլ դեպքում էլ համապատասխանեցնում են տարբերակները։ Այս ամենին գումարվել է նաև համակարգչից օգտվելու հմտությունների անհրաժեշտությունը։ Սրանք գործընթացներ են, որոնք ենթադրում են աշխատանք,սովորողի մատների ճկունություն և տեխնիկական հմտություններ։ Պետք է նախօրոք հաշվի առնել այդ կարիքները և ստեղծել այնպիսի միջոցներ, որոնք հաշվի կառնեն սովորողների հնարավոր ֆիզիկական խոչընդոտները և կառաջարկեն այլընտրանքներ այդ խոչընդոտները հաղթահարելու համար։

Ուսումնառության գործընթացում սովորողների ֆիզիկական գործունեության խոչընդոտները հաղթահարելու համար ուսումնառության համընդհանուր ձևավորումն առաջարկում է.

ա) տարբերակել ֆիզիկական միջավայրում ուղղորդվելու և պատասղանելու մեթոդները
բ) նպաստել օժանդակող տեխնոլոգիական միջոցների և գործիքների հասանելիությանը։

Գիտենք, որ որոշ աշակերտներ կարող են բանավոր խոսքով շատ լավ արտահայտվել, իսկ աշակերտների մի մասի համար էլ դժվար է բանավոր արտահայտվելը, և ավելի հեշտ է աշխատանքը գրավոր կատարելը։ Աշակերտների մի մասի համար էլ ավելի հեշտ է մեկ ուրիշ միջոց.նրանք առաջադրանքը կատարում են ընդգծելով, նկարազարդելով և այլն։

Պատասխանելու, սովորածն արտահայտելու ու կիրառելու համար որևէ մեկ եղանակ, որը մենք ընտրում ենք, կարող է մատչելի չլինել բոլոր սովորողների համար։ Դասը պլանավորելիս միշտ պետք է մտածենք, թե արդյո՞ք առաջադրանքի կատարման տվյալ եղանակի համար աշակերտն ունի համապատասխան ֆիզիկական կարողություն, հմտություն։

Ֆիզիկական միջավայրում ուղղորդվելու և պատասխանելու մեթոդները տարբերակելու համար ուսումնառության համընդհանուր ձևավորումն առաջարկում է դասի ժամանակ ապահովել զանազան հնարավորություններ, այլընտրանքներ, որոնք կկիրառեն սովորողները ուսուցչի հարցին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար: Պատասխանելու ամենատարածված այլընտրանքային և արագ ձևերից մեկը ժեստերով պատասխանելն է: Ամբողջ դասարանի ընկալումը որևէ պնդման մասին ստուգելու համար ուսուցիչը կարող է կատարել տալ բութ մատը վերև կամ ներքև ժեստը: Կարելի է կիրառել նաև փոքրիկ ցուցատախտակներ: Այդ դեպքում յուրաքանչյուր սովորող պիտի ունենա ձեռքի փոքրիկ գրատախտակ և ջնջվող մարկեր: Ուսուցչի հարցին զուգահեռ սովորողներն արագ գրում են իրենց պատասխանը, գրատախտակը բարձրացնում են վերև և ցույց տալիս ուսուցչին: Այս դեպքում ուսուցչից շատ ավելի քիչ ժամանակ կպահանջվի, որպեսզի հասկանա, թե որ աշակերտն է սխալ արել, ապա բացատրի բոլորին հիմնական սխալը և ներկայացնի ճիշտ պատասխանը: Սովորողների կողմից նյութի յուրացումը ստուգելու համար, ամփոփիչ կամ ձևավորող գնահատում իրականացնելու համար, թեստային առաջադրանքներ մշակելու, դրանք արագորեն կատարելու համար շատ արդյունավետ գործիքներ են Mentimeter.com, Quizizz.com հարթակները:

Բացահայտ ճշմարտություն է այն, որ սովորողները իրար ավելի լավ են հասկանում և կարողանում են արտահայտել իրենց մտքերը թիմով աշխատելու դեպքում, որևէ բան մեկը մյուսին ներկայացնելու կամ սովորեցնելու դեպքում: Բացի դասարանում կատարված թիմային աշխատանքները կարևոր է նաև աշակերտներին հանձնարարել այնպիսի տնային հանձնարարություններ, որոնք նրանք կկատարեն թիմերով, խմբերով կամ զույգերով: Սա խթանում է սովորողների մոտ նախաձեռնողականության զարգացմանը, համագործակցության ու հաղորդակցման հմտությունների զարգացմանը: Աշակերտների միջև փոխադարձ և արդյունավետ ուսուցում կազմակերպելու համար պետք է նրանց տալ կոնկրետ ուղղորդումներ, ուսուցանել մոտեցումներ, թե ինչպես իրենք կարող են իրենց դասընկերոջը մի բան սովորեցնել կամ ստուգել նրա աշխատանքը: Այս առումով շատ կիրառելի է փոխադարձ ուսուցման թերթիկը, որն

աշակերտից պահանջում է. «Գուշակիր», «Պարզաբանիր», «Հարցեր տուր», «Ամփոփիր»։ Երբ ուսուցիչը բացատրում է դրա կիրառությունը, աշակերտին հնարավորություն է տալիս համակարգելու իր սովորածը դասընկերոջը սովորեցնելուն կամ ստուգելուն զուգահեռ։

Սովորողների գործադիր գործառույթները զարգացնելու համար ուսումնառության համընդհանուր ձևավորումն առաջարկում է հետևյալ սկզբունքները։

Բոլորս էլ գիտենք, որ մարդիկ որևէ նոր բան անելիս ավելի մոտիվացված են լինում, երբ կա պարզ, հասկանալի նպատակ, և նրանց համար պարզ է, թե որն է իրենց աշխատանքի, կատարածի վերջնարդյունքը, այդ վերջնարդյունքն ինչ կապ ունի իրենց զարգացման կամ սեփական շահերի հետ։ Այդպես է նաև կրթության բնագավառում։ Երբ սովորողի համար հասկանալի է լինում, թե իր աշխատանքը, ջանքերը կոնկրետ դեպի ուր են տանում, երբ նա տեսնում է իր աշխատանքի վերջնարդյունքը, նա ավելի է մոտիվացված լինում և շարունակում է ջանքեր գործադրել։
Սովորողներն առանց անհրաժեշտ օգնության ու ուղղորդման, պարզ է, որ չեն կարող արդյունավետ նպատակներ իրենց ուսումնառության ընթացքում։ Սակայն պետք է ասենք, որ չի կարելի նաև սոովորողի փոխարեն սահմանել նպատակներ։
Ուսումնառության համընդհանուր ձևավորումն առաջարկում է սովորողներին հետզհետե աջակցություն ցուցաբերել, որպեսզի նրանք ինքնուրույն ընկալեն, թե որն է այս կամ այն գործընթացի վերջնանպատակը, կամ իրենք ինչի են հասնելու տվյալ նյութը սովորելով։

Ուսումնառության ընթացքում սովորողի կողմից կատարվող և նրանից պահանջվող յուրաքանչյուր գործողություն, դա կլինի առաջադրանքների կատարում կամ որևէ ուսումնասիրություն, պետք է սովորողի կողմից ընկալվի ոչ միայն որպես առաջադրանք, որն ինքը պարտավոր է կատարել, այլև սովորողը պետք է այդ ամենը կապի իր նպատակների հետ։ Ուստի յուրաքանչյուր ուսուցիչ տարեսկզբին, երբ թեմատիկ պլաններն է պլանավորում, պետք է խոսի աշակերտների հետ, նրանց հետ քննարկի, թե ինչի են ուզում հասնել դասարանով տվյալ տարվա կամ կիսամյակի ավարտին։ Շատ

օգտակար է, երբ նպատակները սահմանվում են յուրաքանչյուր սովորողի հետ։ Այս դեպքում դրանք վերաբերում են երեխայի անձնականին, նպատակներին, երազանքներին, որոնք պետք է անպայման ինչ-որ կերպ կապվեն դասարանի համար սահմանված ուսումնական նպատակների հետ։ Ուսումնական նպատակ է, երբ ուսուցիչը սովորողների հետ ձևակերպում է, թե տվյալ կիսամյակում ինչ են սովորելու։ Օրինակ. «Այս տարի կսովորենք, կուսումնասիրենք հայերենի խոսքի մասերը, լավ կտարբերենք դրանց հատկանիշները և ամփոփիչ թեստից կստանանք 6-ից բարձր միավոր»։ Անձնական նպատակի օրինակ է հետևյալը . «Ես ուզում եմ դառնալ լավ լրագրող, իսկ դրան հասնելու համար ես պետք է լավ սովորեմ իմ մայրենի լեզվի քերականությունը»։ Ահա այսպես թեման կապվում է սովորողի իրական կյանքի հետ, ինչը նպաստում է, որ աշակերտն ավելի մոտիվացված լինի։

Յուրաքանչյուր սովորող, ինչպես մեծահասակները, ունի առաջադրանքները կատարելու յուրահատուկ ռազմավարություն։ Սովորողն ինքն է պլանավորում իր սովորելու գործընթացը, բայց արդյունավետ պլանավորելը և ռազմավարությունների տեղին ընտրությունն դժվար գործընթաց է, և այստեղ սովորողն ունի ուսուցչի օգնության, ուղղորդման կարիքը։ ՈՒՀԶ -ն այս առումով առաջարկում է աջակցել սովորողների պլանավորման և ռազմավարությունների գործընթացին, որպեսզի նյութն ամբողջովին ընկալելի լինի և յուրացվի սովորողի կողմից։

Իսկ ի՞նչ են սովորելու ռազմավարությունները։ Դրանք այն բոլոր քայլերն ու գործողություններն են, որոնք սովորողն ընտրում է նյութը սովորելու կամ առաջադրանքը կատարելու համար։

Այստեղ պետք է անդրադառնալ մետաճանաչողություն հասկացությանը։ Մետաճանաչողությունը մարդու՝ սեփական գործողություններին և սեփական արարքներին հետևելու և դրանք կառավարելու ունակությունն է։ Երբ աշակերտը կարողանում է հասկանալ, վերլուծել, թե ինքն ինչպես է կարողանում կատարել հանձնարարությունը, ինչ եղանակներով է կատարում, կամ ինչպես է հեշտ ու արագ յուրացնում նյութը, ի՞նչն է ավելի դժվար, դա մետաճանաչողական վերլուծություն է։

Մետաճանաչողությունը սովորողներին մղում է ակտիվության ու ինքնուրույնության սովորելու բնագավառում, օգնում է, որ սովորողն իր բոլոր ռեսուրսները մոբիլիզացնի նպատակին հասնելու համար։

Սովորողների մետաճանաչողական հմտությունները զարգացնելու համար ուսումնական գործընթացում անհրաժեշտ է օգտագործել ռուբրիկներ և ստուգաթերթեր, որոնց դեպքում գրված է առաջադրանքն ամենաճիշտ ձևով կատարելու սկզբունքներն ու քայլերը, ակնկալիքը տվյալ նյութը սովորելու համար։ Դասի ամփոփման համար օգտակար են ելքի քարտերը, որոնց միջոցով աշակերտը վերանայում է օրվա սովորածը.ի՞նչն էր դժվար, ի՞նչ հարց մնաց, ի՞նչը կօգնի այդ հարցի պատասխանը ստանալու համար։

Մետաճանաչողությունը զարգացնելու համար շատ կարևոր ռազմավարություն է սովորողներին անընդհատ հարցեր տալը.«Ինչպե՞ս իմացար, ինչպե՞ս գտար ճիշտ պատասխանը», «Ի՞նչ գործողություններ կատարեցիր», «Ինչու՞ հենց այդ պատասխանը» և այլն։ Այս հարցադրումների շնորհիվ սովորողը դիտարկում է սովորելու իր ռազմավարությունը։

Հետադարձ կապով է պայմանավորված ուսումնառության ընթացքն ու արդյունավետությունը։ Եթե հետադարձ կապը ժամանակին չտրամադրենք, չենք իմանա, թե սովորողն ինչ առաջընթաց ունի, ինչի վրա պետք է ուշադրություն դարձնել, որպեսզի նա ավելի լավ դրսևորվի ուսումնառության հետագա գործընթացում։ Հետադարձ կապը պետք է տրամադրել սովորողներին ճիշտ ժամանակին և պարզ, հասկանալի ձևով։ Արդյունավետ հետադարձ կապը իր մեջ պետք է ներառի անդրադարձ սովորողի ձեռքբերումներին, հաջողություններին։ Դասավանդողը պետք է ներկայացնի, թե ինչն է լավ ստացվում սովորողի մոտ, ապա ներկայացնի, թե սովորողն ինչի վրա պետք է ավելի շատ ուշադրություն դարձնի, ինչ պետք է անի, որ ավելի լավ ցուցանիշներ գրանցի։ Հետադարձ կապ տրամադրելու ժամանակ ուսուցիչը պետք է լինի նպատակային, չքննադատի սովորողին։ Հետադարձ կապը պետք է նշի հստակ քայլեր,

որոնք արտահայտվում են բայերով, որպեսզի սովորողի համար հասկանալի լինի, թե ինչ է իրենից ակնկալվում անել ցանկալի արդյունքի հասնելու համար։

ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՁԵՎԵՐԻ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆ

Մարդու ուղեղի երրորդ գործառնական ցանցը հուզական կամ աֆեկտիվ ցանցն է, որն ապահովում է սովորողի հետաքրքրվածությունը սովորելու հանդեպ։ Դա սովորողի ներգրավված լինելու ցանկությունն է, սովորողի այն հուզական վիճակն է, երբ սովորողն ինքն իրեն հարց է տալիս, թե ինչու պետք է այդ ամենը սովորի, կատարի, թե ինչու է դա իրեն հետաքրքիր։ ՈՒՀՁ-ի այս ուղենիշն ունի երեք սկզբունք։ Դրանք են.

ա) հետաքրքրության խթանում

բ) ջանքերի շարունակականության և տոկունության խթանում

գ) ինքնատիրապետման և ինքնակարգավորման համար հնարավորություններ։

Որպեսզի սովորողների հետաքրքրությունը խթանենք, և որպեսզի նրանք ուսուցման գործընթացում անընդհատ կարողանան ջանքեր գործադրել անհրաժեշտ է.

ա) տրամադրել բավարար հնարավորություններ անհատական ընտրություն կատարելու և ինքնուրույնության համար

բ) ուսումնառությունը կապել սովորողների իրականության և իրական կյանքի հետ, ընդգծել սովորելու արժեքն ու կարևորությունը

գ) տարբերակել պահանջներն ու ռեսուրսները ուսումնառության օպտիմալ բարդության ապահովման համար, խրախուսել համագործակցությունն ու թիմային աշխատանքը։

Ի՞նչ ենք հասկանում ասելով՝ տրամադրել հնարավորություններ անհատական ընտրություն կատարելու և ինքնուրույնության համար։ Սովորաբար, երբ մարդն ինքն է ինչ-որ բան ընտրում, որոշում, թե ինչպես պիտի դա անի, նրա մոտ

պատասխանատվության բարձր զգացում է առաջանում, և նա ջանք ու եռանդ չի խնայում այդ գործը բարեհաջող ավարտելու համար։ Սովորողների մոտ պատասխանատվության զգացում առաջացնելու համար մենք նրանց պետք է տանք ընտրության հնարավորություն։ Սովորողներն իրենք պիտի որոշեն, թե ինչպես են լուծելու խնդիրները, ինչ եղանակներով են կատարելու առաջադրանքները և այլն։ Սովորողներին ընտրության հնարավորություն տալու մասին խոսելիս պետք է նշել, որ այն ենթադրում է ավելի շուտ միջոցների ընտրություն։ Պարզ է, որ ուսումնական ծրագրով սահմանված նյութը սովորողն անպայման պետք է յուրացնի իր ուժերի չափով, մենք չենք կարող նրան հարցնել, թե ինչ է ուզում սովորել։

Ընտրության հնարավորությունը ուսուցման եղանակների, պատասխանելու, առաջադրանքները կատարելու ձևերի ընտրությունն է, ինչի շնորհիվ սովորողների մոտ զարգանում է ինքնուրույնությունն ու ինքնաուղղորդումը։ Ընտրության հնարավորություն տալուց բացի պետք է հաշվի առնել սովորողի ինքնուրույնության մակարդակը։

Երբ մենք աշակերտին տալիս ենք աշխատանքը կատարելու տարբեր հնարավորություններ, պետք է իմանանք, թե արդյոք աշակերտը դրան պատրաստ է, քանի որ կան աշակերտներ, որոնց ընտրության հնարավորություն տալուց հետո մենք պետք է ուղղորդենք։

Ինչպե՞ս պետք է ուսումնառությունը կապել սովորողների իրականության և իրական կյանքի հետ։ Եթե ուսումնական նյութը ինչ-որ ձևով կապվում է իրական կյանքի հետ, էլ ավելի է հետաքրքրում սովորողին։ Դրա համար պետք է ուսումնառությունը կապել այն միջավայրին, որտեղ սովորում է աշակերտը։

Նախքան նյութի մատուցումը կարելի է ներկայացնել, թե սովորողները կյանքում որտեղ կարող են հանդիպել ներկայացվելիք երևույթին։ Սովորողներին պետք է ներգրավել այնպիսի առաջադրանքների մեջ, որոնց արդյունքները տեսանելի են։ Շատ խրախուսելի է նախագծային աշխատանքը, որը կատարելու համար սովորողները նախագծում են մի բան, որը կապված է իրենց թեմայի և առարկայի բովանդակության հետ։ Նրանք

սովորում են ուսումնական նյութը, կիրառում են և կիրառության մեջ են սովորում իրենց հանձնարարված նյութը։

Սովորողներին մոտիվացնելու, նրանց մոտ մատուցվող ուսումնական նյութի նկատմամբ հետաքրքրություն առաջացնելու համար պետք է տարբերակել պահանջներն ու ռեսուրսները։ Սա նշանակում է, որ բոլոր սովորողները պետք է հնարավորություն ունենան ստանալու անհրաժեշտ բարդության առաջադրանքներ, որոնք մի կողմից իրենց համար բարդ կլինեն, բայց կդրդեն նրանց զարգանալ և առաջ գնալ, իսկ մյուս կողմից նրանք պատրաստ կլինեն, բավարար հիմք կունենան առաջադրանքը կատարելու համար։

Սովորողների ուսուցման արդյունավետության վրա շատ է ազդում ուսուցանվող նյութի բարդ լինելը։ Երբ սովորողը չի կարողանում հաղթահարել այդ բարդությունը, նրա մոտ ընկնում է ինքնագնահատականը։ Խոչընդոտների հանդիպելով՝ սովորողը սկսում է չսիրել այդ նյութը, չի ուզում կատարել այդ նյութին առնչվող առաջադրանքները։

ՈՒՀԶ-ն առաջարկում է տարբերակել առաջադրանքները ըստ բարդության աստիճանի, յուրաքանչյուր երեխայի տրամադրել համապատասխան բարդության աստիճանի առաջադրանք։ Բացի սրանցից դասարանային մթնոլորտում պետք է շեշտադրել ջանքերը և գործընթացը։ Չպետք է երեխային համեմատել իրենից ուժեղի հետ, քանի որ դա չի օգնում երեխային ոչ մի բանով, այլ երեխաների մոտ առաջացնում է անառողջ մթնոլորտ, ազդում է երեխայի ինքնագնահատականի վրա, բացասաբար ուսումնառության գործընթացի և սովորողի մոտիվացիայի վրա։ Մեկ ուրիշի հետ համեմատելու փոխարեն ավելի խրախուսելի է սովորողի առաջադիմությունը, գիտելիքները համեմատել հենց իր՝ որոշ ժամանակ առաջ ցուցաբերած գիտելիքների հետ։ Շատ կարևոր է, որ ուսուցիչն անընդհատ ուշադրություն դարձնի ջանքերի վրա, հասկանա, թե յուրաքնչյուր երեխա ինչ չափով է ջանք թափում նյութը սովորելու համար։ Միևնույն նյութը մի երեխա կարող է սովորել տաս րոպեում, մյուսը՝ մեկ ժամում։ Եթե երեխան չի խրախուսվում իր ջանքերի համար, դա կարող է բացասաբար ազդել երեխայի մոտիվացիայի վրա։

Բոլորիս համար էլ հասկանալի է, որ ամեն երեխա դպրոց է գալիս տարբեր հուզական վիճակով: Ժամանակակից աշխարհում կատարվող իրադարձությունները վատ են անդրադառնում սովորողների մոտիվացիայի կենտրոնանալու ուսումնական գործընթացի վրա: Սովորողի մոտ բացասական հուզական վիճակ նկատելիս ուսուցիչը պետք է զրուցի երեխայի հետ, ձգտի ապահովել երեխայի հուզական ինքնակարգավորումը և ինքնատիրապետումը: Հոգատար ուսուցիչը պետք է կարգավորի երեխայի հուզական վիճակը, ապա այդ երեխային ներգրավի դասապրոցեսի մեջ: Հետևաբար անհրաժեշտ է

ա) խթանել մոտիվացիան բարձր ակնկալիքների և հավատալիքների միջոցով

բ) զարգացնել սովորողների դժվարություններին դիմագրավելու և դրանք ինքնուրույն հաղթահարելու հմտություններն ու անձնային ունակությունները

գ) զարգացնել ինքնագնահատման, ինքնավերլուծության հմտությունները:

Ամերիկացի հոգեբան Ռոբերտ Ռոզենտալը իրականացրել է մի գիտափորձ, որը ցույց է տալիս մոտիվացիայի ուսուցման արդյունքների ու բարձր ակնկալիքների միջև եղած օրինաչափությունը: Նա մի դպրոցի աշակերտների երկու խմբի առաջադրանք է տալիս գնահատում աշխատանքները, սակայն ուսուցիչներին և աշակերտներին հայտարարում է ոչ ճիշտ արդյունքներ: Մի խմբին նա հայտարարում է, որ շատ թույլ աշխատանք են կատարել և տարեվերջին էլ վատ արդյունք կունենան, իսկ մյուս խմբին գովաբանում է և ասում, որ տարեվերջին գերազանց ցուցանիշներ կունենան: Տարեվերջին որպես թույլ ներկայացված աշակերտները, որոնք նախկինում ավելի լավ էին սովորում, ցուցաբերում են իսկապես ցածր արդյունքներ, իսկ մյուս խմբի սովորողները ցուցաբերում են բարձր արդյունքներ: Այս հետազոտության արդյունքում հաստատված վարկածը, որը հայտնի է որպես Պիգմալիոնի էֆեկտ կամ Ռոզենտալի էֆեկտ ցույց է տալիս, որ ուսուցչի՝ աշակերտից ունեցած ակնկալիքների մակարդակը անմիջականորեն կապված է ուսումնառության արդյունավետության, սովորողի մոտիվացիայի և կատարողականի հետ: Ինչքան բարձր սպասելիքներ ունենանք սովորողներից, հավատանք նրանց ուժերին ու նրանց էլ վստահություն ներշնչենք իրենց իսկ ուժերի նկատմամբ, այնքան

լավ արդյունքներ կցուցաբերեն սովորողները։ Պետք է հավատանք սովորողների կարողություններին և միշտ բարձր ակնկալիքներ ներկայացնենք ամեն մեկին։

Երբեմն այնպես է լինում, որ սովորողը ցուցաբերում է կոնֆլիկտային վարքագիծ, որը բացասաբար է ազդում մյուս սովորողների վրա։ Պետք է այնպես անենք, որ սովորողը ճանաչի սեփական հույզերը, դրանց պատճառները։ Այստեղ շատ արդյունավետ են պարզ հարցադրումները, որոնց միջոցով երեխան ինքնաանդրադարձ է կատարում, հասկանում և գնահատում իր հույզերը։ Կարող ենք բանավոր կամ գրավոր հարցեր տալ աշակերտին.

1.Ի՞նչ կատարվեց քեզ հետ։

2.Ի՞նչ էիր զգում այդ ժամանակ։

3.Ինչու՞ այդ պահին այդպես վարվեցիր։

4.Ի՞նչ հետևանք ունեցավ քո արարքը։

5.Ի՞նչ պիտի անես, որ նման բան չկրկնվի։

Այս հարցերի միջոցով աշակերտը ինքնավերլուծություն է կատարում, ինքն իրեն ավելի լավ է ճանաչում, ապա ուղղում է իր սխալները։

Ուսուցիչը միշտ պետք է ձգտի կարգավորել սովորողի հուզական վիճակը ուսուցման գործընթացում՝ գիտակցելով այդ հույզերի մարդկային ու օրինաչափ լինելը։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով՝ ՈՒՀՁ-ն իր սկզբունքներով հանդերձ սովորողների բազմազանությունը ճանաչելու, հարգելու և արժևորելու միջոց է: ՈՒՀՁ-ն հնարավորություն է տալիս զարգացնել յուրաքանչյուր սովորողի ներուժն ու բարձր ակնկալիքներ սահմանել թե՛ ուսումնառության գործընթացում առաջընթացի, թե՛ որպես անհատ քաղաքացի զարգանալու համար: ՈՒՀՁ-ն թույլ է տալիս պլանավորել՝ հաշվի առնելով աշակերտների տարբերությունները և առանձնահատկությունները:

Որքան շատ և հաճախակի կիրառենք ՈՒՀՁ-ի սկզբունքները դասերը պլանավորելիս, այնքան բոլոր սովորողները լիովին ներգրավված և մոտիվացված կլինեն, այնքան ուսումնառության գործընթացը բոլոր սովորողների համար կդառնա մատչելի, ըմբռնելի և հետաքրքիր:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Դավթյան Մ., Խաչատրյան Մ., Դասավանդման ժամանակակից մոտեցումներ ու մեթոդներ, Երևան 2019

Ավագյան Ա., Գևորգյան Ե., Գևորգյան Ս, Կյուրեղյան Հ., Գրիգորյան Ռ., (Խմբ.) (2019) Ներառական կրթության ռազմավարություններ: Դասագիրք: Մինեապոլիս, Մինեսոթա, ԱՄՆ, Մինեսոթայի համալսարան: ՅՈՒՆԻՍԵՖ Հայաստան և Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, 2019